հաւատալի աշխատութեամբ մեծ ցո-
ղեն մը կը տանէր. երբոր մնտուկին
հասաւ, որ բոյներնին հոն էր, այնչափ
արտորալ սկսաւ՝ որ ան աշխատալի
ճամբորդութենէն ետքը բեռովը վար
ընկաւ։ Այսպիսի դժբախտուն փի-
լիսոփայի մը ալ հանդիպէր նէ՝ սիրտը
կը նեղացընէր։ Վար իջայ, տե-
սայ որ ան մրջիւնը ցորենը ճանկե-
րովը բռներ է։ Ցորէն վեր սկսաւ ելլել. իրեք անգամ նոյն դժբախտու-
թիւնը հանդիպեցաւ։ Յղաւ որ ճամ-
բուն կէսէն ընկաւ, եղաւ ալ որ աւե-
լի բարձրէն. բայց ոչ երբէք ունեցա-
ծը թողուց, և ոչ յուսահատեցաւ։
Բայց վերջապէս ուժէ ընկաւ ու կե-
ցաւ. ուրիշ մրջիւն մը եկաւ օգնեց
իրեն որ բեռը տանի. բեռն ալ գե-
ղեցիկ մեծկակ ցորեն մը էր որ մրջիւն մը հազիւ կրնայ տանիլ։ Այ
հանդիպի որ պատէն վեր ելլելու ա-
տեն ցորենը ճանկերնուն կը սահի
կ'իյնայ. թէ որ գտնեն՝ կ'երթանն-
ռէն կ'առնեն, չէ նէ ուրիշ մը կը
փնտռեն, և կամ ուրիշ բան մը կ'առ-
նեն. վասն զի կ'ամչնան պարապ
ձեռքով բոյնը դառնալու։ Աս բանս
փորձեր եմ, ու գտած ցորենին մէկ-
դի եմ առեր։ Թէ որ մէկը բաւական
համբերութիւն ունենայ, բոլոր աս
փորձերը դիւրաւ ինքն ալ կրնայ ը-
նել. մրջիւններուն ունեցած համ-
բերութեանը չափ համբերութիւն
հարկաւոր չէ. բայց քիչ մարդ կայ որ
աս բանս ընէ „։

„ պէս՝ քովը պէտք է խելացի զգուշա-
„ ւոր ու դիտող մարդ մը գտնուի,
„ որ վրան աղէկ աչք ունենայ, ա-
„ մէն տեսակ ախտերէ զինքը զգուշա-
„ ցընէ, մանաւանդ չար ընկերներու
„ կենակցութենէ „։

Տղոց բարոյականը խիստ պզտիկուց
շտկել սկսելու է. աս բանս սուրբ
գիրքը ծանր խօսքերով կ'ապրսպրէ,
ու ծնողաց վրայ պարտք կը դնէ որ
ամենևին աս կողմանէ անհոգութիւն
չընեն։

Բարոյական դաստիարակութեան
մէջի մեծամեծ սխալմունքները շատ
գէշ հետևանքներ կ'ունենան՝ թէ
մասնաւոր անձանց և թէ բոլոր ընկե-
րութեան համար. աս սխալմունքնե-
րուն դիմացը առնելու ինչ հնարքներ
որ կան՝ հոս համառօտ կերպով մը յի-
շենք։

Ա. Ղար օրինակ։ — Ղար օրինակը
ամէն բանէ աւելի տղոց բարքը կ'աւ-
րէ. անոր համար ծնողք և վարժա-
պետք ամենայն կերպով պիտի ջանան
որ տղոց բարի օրինակ տան։ Ֆենե-
լոն որ և իցէ օրինակին այնչափ ազ-
դու ըլլալուն բնական պատճառը աս
բանս է կ'ըսէ. "Տղաք զանազան բա-
„ ներու վրայ դեռ որոշ ու պայծառ
„ գաղափար և բաւական հմտութի-
„ չունենալով, ինչ որ տեսնեն՝ մէկէն
„ անոր կը հետևին, ու մտքերնին կը
„ պահեն „։

Ուստի խիստ հարկաւոր է որ տղոց
քով եղողները առաքինի ու ընտիր
մարդիկ ըլլան, մանաւանդ ծնողք,
ու ջանան միշտ բարի օրինակ տալու.
և թէ որ մէկը բնութեամբ առաքի-
նի չէ, գոնէ նայի որ տղոց առջևը ա-
ռաքինի երևնայ. որպէս զի իրեն չար
օրինակովը ուրիշներուն կորստեանը
պատճառ ու պատասխանատու չըլ-
լայ։

Յոբնաղ լատին բանաստեղծն ալ
կ'ըսէ, թէ "Տղոց առջևը շատ պատ-
կառանքով կենալու է „. աս խօսքը
կրնանք ասանկ իմանալ՝ թէ տղայ մը
քանի որ դեռ պզտիկ է՝ ինչ և իցէ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Բարոյական դաստիարակութեան մէջ եղած սխալմունքներուն վրայ, և թէ ինչ կերպով անոնց առաջը առնելու է։

Ա.

Շատ իմաստութեամբ կ'ըսէ Լոք փիլիսոփան. "Տղայ մը լեզու ելլելուն

տեղ ալ ըլլայնէ պէտք չէ տեսնէ կամ լսէ այնպիսի անվայել գործքեր ու ծուռ սկզբունքներ որ զինքն ալ կրնան մոլորցընել։

Ուստի պէտք է որ ծնողք տղոց առջև ոչ և իցէ մարդու վրայ գէշ խօսելէն զգուշանան. ապա թէ ոչ՝ տղաքն ալ նոյն կերպերը սորվելով, երբոր մեծնալու ըլլան՝ իրենք ալ ուրիշի վրայ արհամարհանօք կը խօսին. ասով ընկերութեան մէջէն սէրն ու համարմունքը կը վերնայ և ընկերութիւնը կը քակուի։

Փափկութի, աղքատներուն դէմ խստասիրտ ըլլալ, որկրամոլութիւն, գողութիւն, և ուրիշ ասոնց նման ախտերը շատ անգամ ծնողք տղոց առջևը համարձակ կ'ընեն. անով խեղճ տղաքն ալ նոյն ախտերուն տէր կ'ըլլան։

Տղոց առջև իրարու հետ կռիւ ընելը, մանաւանդ նախատական խօսքերով, շատ վնասակար է տղոցը. վասի անով տղաք ծնողացը վրայ ունեցած համարմունքնին կը կորսընցընեն. անկէ աս մեծ վնասներն ալ կը ծագին, որ մեծնալէն վերջը իրենց ծնողաց խօսքերը մտիկ չեն ըներ, իրենք ալ կը վարժին ուրիշներու հետ կռիւ ընելու, և նոյնպէս անարգանօք վարուելու պատուաւոր անձանց հետ ալ. քաղաքական և աստուածային օրինաց ալ չեն հնազանդիր, ու սաստիկ արհամարհոտ կ'ըլլան։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԱՀԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Օթեսսա։

ՈՒՍԱՍՏԱՆԻ երրորդ գլխաւոր քաղաքը սեպուած է հիմա Օտեսսան, Փեթրպուրկը առաջին՝ ու Մոսքուան երկրորդ դնելով։ Այսիկայ յիսուն տարի առաջ խեղճ ողորմելի գեղ մըն էր որ Խաճապէյ կ'ըսուէր, ու բնակիչները Թաթար էին՝ քանի մը տնակներու մէջ բնակած. իսկ հիմա Եւրոպայի խիստ գեղեցիկ ու բանուկ քաղաքներէն մէկն եղած է, և գրեթէ 70,000 բնակիչ ունի։ Երբոր Կատարինէ Բ կայսրուհին 1793ին գնաց Խրիմ ու մօտ տեղուանքը քալեց, Ռիշելիէօ անունով գաղղիացի դքսին խորհրդովը աս նոր քաղաքին հիմը ձգեց. և որովհետև կը կարծուի թէ հին ատեն Յունաց Օթեսոս ըսած քաղաքը ան կողմերը կ'ելնար, ասոր ալ անունը Օտեսսա դրաւ։ Փողոցները լայն ու շատը քարայատակ են, բոլոր տները կանոնաւոր ու մեծաշէն, խանութները հարուստ, եկեղեցիները գեղեցիկ. բայց ամենէն աւելի գեղեցիկ կտորը ծովեզերեայ ճեմելիքն է, որ փառաւոր պալատներով ու շատ ծառերով զարդարուած ըլլալովը՝ ծովուն կողմէն եկողին միտքն ու աչքը կը զմայլեցընեն։ Բնակիչներուն գրեթէ երրորդ մասը օտարազգի են, այսինքն գերմանացի, իտալացի, գաղղիացի և յոյն. մեր ազգէն ալ 50 տունի չափ կան՝ որ Ուլահի կողմերէն եկած են հոն։ Այս քաղաքիս վաճառականութիւնը խիստ բանուկ է, մանաւանդ որ 1817ին'ի վեր ազատ նաւահանգիստ եղած է 30 տարուան համար։ Ռուսաստանի բոլոր հարաւային կողմերէն վաճառքները հոն կ'ինան, դրսէն ալ Սև ծովին նեղուցէն ու բոլոր ներսի նաւահանգիստներէն նաւերը Օտեսսա կուգան։ Պօլիսէն ալ հոն քանի մը տարի է որ շոգենաւ կը բանի 15 օրը մէյմը, ու երկու օրուան մէջ կը հասնի։

Հրապարակական շէնքերուն մէջ երևելի են Ռիշելիէօի վարժարանը, մաքսատունը, դրամատունը, արևելեան լեզուաց ուսումնարանը, տնկաբանական պարտէզը, թէատրոնը, հարաւային Ռուսաստանի հնութեանց պահարանը, այլ և այլ դպրոցները, ընկերութիւնները և այլն։ Բոլոր հարաւային Ռուսաստանի զինուորա-